սեպհականութիւն էր(*)։ Ձեռագիրը գրուած է «ի յերկնահանդէտ և ի գերահռչակ սբ. ուխտս Այրիվանս վերաձայնելոյ, ընդ հովանեաւ մաւրս լուսոյ սբ. Աստծնի. և հրաշափառ և երկնանման սբ. կաթուղիկէիս և ՅՈՒՍԱԿԱԼ սբ. նշանացս և արեամբ ներկեալ անմահին Յի. սբ. գեղարդեանս եւ սբ. աջերոյս, Յովհաննու Մկրտչին, ձեռնադրողին Քի. և սբ. աջոյ Բարդողիմէոսի առաքելոյն և համաւրէն ամ. սրբոցս, որ ասա կան հաւաքեալ աւժակութիւ. (sic) հոգւոյն սրբոյ և կամակցութիւ. սբ. եղբարցս և բազմերախտ հոգւոյ հաւր մեր և վարժապետացն տր. Ներսեսի և ամ. սրբութեց. վարպետի տր. Յոհս. Ծաղկողի, որ բազում երախտիք ունի ի վերայ մեր»։ Աստուածատուր քահանայի հայրն է Խոցաղեղ և մայրը Հռիփսիմէ, հօրեղբայրը Յովանես և եղբայրը Պռոշ։ Ստացողի ըստ հոգւոյ հարազատ եղբայրն է Ստեփանոս նկարող, որ յայտնում է իւր կողմից, թէ «վասն ջերմեռանդ սիրոյ նորա (ստացող Աստուածատրի) ծաղկեցի և նկարեցի և կազմեցի»։ Ստեփանոս Ծաղկողի արուեստը չի կարող Մատթէոսի հետ չափուել, բայց անարժէք չէ, յատկապէս լուսանցքի թռչունների, կենդանիների և սրբերի պատկերագրութեամբ և զարդերով։ Բացի դրանից ձեռագիրն ունի մշակոյթի պատմութեան համար յատուկ արժէք նաև կազմի կողմից, որ, կարծում ենք, անաղարտ հասել է մեզ Ստեփանոսի ձեռքից դուրս եկած. հաստ տախտակը կաշով պատած, մի կողմը զեղեցիկ խաչ և միւսում հիւսկէն զարդարանք դրոշմած, 32 × 22 × 12 սմ.։ Կազմի հնութեան արտաքին ապացոյցների հետ ունինք և Ներսի կողմից կպցրած լաթի կտորը, որ կէս մետաքս գեազի է հին տեսակի։ Այսպիսով տեսնում ենք, որ ԺԵ. դարում Այրիվանքը կատարելապէս ծաղկած վիճակի մէջ է. ափսո՞ս, աւելի մանրամասնութիւններ չգիտենք «վարժապետացն տր. Ներսեսի» եւ «տր. Յովհաննէս Ծաղկող»ի եւ «Ստեփանոս Նկարող»ի մասին։

Կայ և ստացող Աստուածատուր քահանայի և յետագայում եպիսկոպոսի ինքնաձեռագիր յիշատակարանը, որով թողութիւն է խնդրում նախ իւր վերոյիշեալ ծնողների և ազգականների և ապա «մաւրքըւերն Խութլու խաթունին և քըւերն իմոյ Մարգարտին և Նարինին և հանգուցեալ քերցն իմոց Թանսուխին, Խութլու խաթունին և Մարթային և եղբարցն իմոց Մարտիրոսին եւ աշակերտի Պետրոսին եւ Սարգսին»։ Գիրքը նուիրում է Հռոմոսի վանքին «սբ. Յովանեսին եւ սբ. Աստծնին դրանցն»։ Աստուածատուր եպիսկոպոսի այս նուիրատուութիւնը յետոյ՝ առանձին յիշատակարանով Սարգիս կաթուղիկոսի եւ Հռոմոսի Գրիգոր եպիսկոպոսի կողմից հաստատուած են ՋԼԴ (= 1485) թուականին. չենք կարող ասել, թէ Դեղարդի նախկին Աստուածատուր արեղան նո՞յն վանքի, թէ Հռոմոսի վերայ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ. առաջին դէպքում նա պէտք է մեռած լինի դարի եօթանասնական թուականների սկզբին, որովհետև 1475 թուին արդէն Դեղարդի եպիսկոպոսն էր տէր Յոհաննէս, իւր եղբայր Նորընծայ Ստեփանոս կուսակրօն արեղայի հետ, որ յետոյ յաջորդեց եպիսկոպոսական աստիճանով. սրանք Պռոշեանց տոհմից էին(*)։



Պատկեր 171,

Մխիթար Այրիվանեցու Ճառընտրի 345բ. ներքևի լուսանցքում սև ֆոնի վերայ նկարուած է «Յի. Քի. ծառայ Յոհան» խօսքերը, իսկ սորա տակը մի կնիք «Քի. ծռ / ըստեփն / արեղ», որ կրկնուած է նաև 346ա. լուսանցքում, որոնք Յովհաննէս և նորա եղբայր Պռոշեաններ են։ Կայ մի երրորդ կնիք ևս, բայց կարդալ չկարողացանք։

Ստեփանոսին յաջորդեց Բարսեղ եպիսկոպոս դարձեալ նոյն տոհմից, 1493 թուին(**)։

Այս շրջանի, այսինքն ԺԶ. դարի գործ ենք համարում զոյգ, անթուական խաչարձանները, որ կըց-

(*) Այժմ Էջմ. № 1159 (Լաղ. № 9). թուղթ, ընտիր բոլորգրով, երկսիւն, մեծ սկզբնագարդերով և լուսանցքի զարդերով. վերջին մեծ յիշատակարանը 551բ., ամբողջ 555 թերթ։ Բովանդակութիւնը ճաշոցի հետ նաև Սաղմոս կըրճատ, Տօնացոյց և երգերը (Ցաւել. Բ. 49)։

(*) Խաղբակեանք. Ա. եր. 232. 234. 236. 253։

(**) Թորոս Աղբար. Սրուանձտեանի. 304։